

ԼՈՒՐԵՐ ԳՈՒԳԱՐՔԻ ԹԵՄԻՑ

Հայ ժողովուրդը վերջին տարիներս ազգային եկեղեցական վերելք է ապրում: Ստեղծվում են նոր թեմեր, բացվում են նոր եկեղեցիներ: Ճիշտ է, այս բոլորի հետ կապված կան նաև շատ ու շատ դժվարություններ, սակայն այդ դժվարությունները անցողիկ են և հաղթահարելի:

Վերջերս, ի թիվս այլ նորահիմն թեմերի, տեղի ժողովրդի պահանջով և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ հիմնադրվեց նաև Գուգարքի թեմը, որն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության յոթ շրջաններ՝ առաջնորդական կենտրոն ունենալով Դիլիջան քաղաքը: Գուգարքի թեմի սահմաններում են գտնվում մեր՝ նշանավոր պատմական վանքերից Հաղպատը, Սանահինը, Օձունը, Խորանաշատը, Մակարավանքը, Գոշավանքը և Հաղարծինը: Գործող եկեղեցիներ կան Կարմիրում, Տավուշում, Իջևանում և Նոյեմբերյանում: Սակայն գործող վեց վանքերում և եկեղեցիներում ապաստարկում են միայն երեք քահանա հայրեր, մի հանգամանք, որը խիստ դժվարացնում է թեմում հոգևոր գործունեությունը: Գործող բոլոր եկեղեցիներում կազմված են երգչախմբեր: Նախատեսված է Դիլիջանում կառուցել նոր եկեղեցի: Եկեղեցիներում արարողությունների ապաստարկման համար թեմը խիստ կարիք ունի սարկավագների և դպիրների, չնայած Հաղպատի վանքում կազմակերպված հատուկ դասընթացներն ավարտելուց հետո 12 դպիրներ ծառայության նշանակվեցին թեմի մի քանի եկեղեցիներում:

Բազմաթիվ դիմումներ են ստացվում գյուղական շրջաններից՝ ուղղված թեմի թեմական առաջնորդին՝ իրենց մոտ եկեղեցի կառուցելու խնդրանքով:

Գուգարքի թեմի կազմավորման հետ զուգահեռ ստեղծվել է Տիկնանց Միությունը, որը ծավալում է բարեսիրական գործունեություն. օգնություն փախստականներին, անխնամ մնացած ծերերին, որբ երեխաներին և այլ բնույթի մարդասիրական գործեր:

Թեմի հովանավորության ներքո ստեղծվել է մանկական մի շնորհալի երգչախումբ:

Գուգարքի թեմն արդեն կատարում է իր ազգային-եկեղեցական դրական հաստատուն քայլերը: